

**Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
11-րդ դասարան**

Տևողությունը 180 րոպե

Հաճախ թվում է մեր արարքներն անհետ կորչում են դառնում անցյալ չքանալով ժամանակի հոլովության մեջ: Հիշիր կյանքում **ոչինչ** լավ թե վատ անհետևանք չի անցնում առավել ևս անարդյունք շիվը քո ձեռքով **տնկված** տարիներ հետո սաղարթախիտ ծառ է դառնալու և խոնջացած մարդը նրա ստվերում ըմբռնվելով իր հանգիստը մեղմելով հոգու խռովքը բարօրություն է **մատթելու քեզ**: Բայց քո կտրած մի ճյուղը մի դալար ճյուղն անգամ մեր հողագնդից պերճահյուս այս **մոլորակից** մի բուռ գովաստին շվաք ախորժալուր մի բույլ սուսափ է պակասեցնում: Եվ **դրանից** խաթարվում են բնության հրաշք երկունքից ի վեր սահմանված անքակտելի հավասարակշռությունը **նրա** ներդաշնակ քերթվածքը անձեռակերտ ու զարմանահրաշ:

Բարությունը մարդու ամենամեծ զենքն է, չարն ու չարիքը **վերացնելու** ամենագորեղ հաղթաթուղթը: *Ցավոք, շատերն իրենց գիտակցական կյանքում այդպես էլ չկարողացան արժևորել այդ թանկարժեք պարզը, որ Աստված շնորհել է մահկանացուին՝ աշխարհի միակ բանական էակին*: Բարությունը վսեմագույն առաքինություն է, վեհանձն մարդու չեղծված նկարագրի, նրա անանձնական աշխարհի **առհավաստյան**, և ամենակարևորը՝ սեր, հավատ, երջանկություն ու լույս սփռելու մեծագույն շնորհը:

1. Տու՛ր բարության քո մեկնաբանությունը 2 նախադասությամբ: (1 միավոր)
2. Կետադրի՛ր բնագրի առաջին պարբերությունը: (2 միավոր)
3. Գրի՛ր **հոլովույթ, խռովք, անքակտելի, քերթվածք, անձեռակերտ, առաքինություն, եղծել, նկարագիր, անանձնական, առհավաստյա** բառերի մեկական հոմանիշ (ըստ բնագրում արտահայտած իմաստի) կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
4. Գրի՛ր թավ գրված բառերի խոսքիմասային արժեքները, շարահյուսական պաշտոնները: (2 միավոր)
5. Բառաշարքից ընտրի՛ր այն բառերը, որոնց հոգնակին կազմվում է **–եր** վերջավորությամբ. **փողկապ, աստղանիշ, խմբագիր, ակնարկաշար, գորացույց, հետիոտն, լուսանցք, շուրթ, սպի, դյուցազն, դաշնագիր, դիտանցք, սևամորթ, շերամորդ, ստորաքարշ**: (2 միավոր)
6. Տեքստից դո՛ւրս գրիր պարզ և սուկածանցավոր բայերի հինգական օրինակ: (1 միավոր)
7. Փոխակերպի՛ր բնագրում շեղ գրված նախադասությունը, կետադրի՛ր: (1 միավոր)
8. Կազմի՛ր 10 ածանցավոր բառ **-ակ** ածանցով (առանց երկրորդ ածանցի) և տրված բառերից ընտրված համապատասխան արմատներով. **սոխուկ, բազմերամ, բամբիշ, խաժ, անտարբեր, փոխանցում, ամրոցամերձ, օդահեն, գորագունդ, ընդունելի, կիսադիմ, բանավան, նվիրել, առվույտ,ալեծուփ, անխառն, անպետք, գովազդ, ովևե**: (2 միավոր)
9. Առանձնացրո՛ւ սխալ գործածված բառաձևերը՝ կողքին նշելով ճիշտ ձևը. **իմ գիրքը, մեր համար, ասացի, հանձին նրանց, խոչընդոտել առաջընթացը, ծանոթանալ փաստերի հետ, մզեցնել, ի ուրախություն, խթանել զարգացումը, առանց զգուշացում, մի՛ մոտեցնի, խաբսվել, այլոք, քեզ հետ,ամբողջ մարդիկ, մեր մոտով**: (2 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն «Ուղերձ խելակորույս աշխարհին » վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)